ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հաամիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

աղոթք արտասանելով, կտրում է դրամը: Առհասարակ այստեղ «նորը» սկսում են կտրել, երբ լուսինը երեք օրական է և կտրում են երեք օրվա ընթացքում: Այդ ժամանակ երկու աղոթք են ասում՝

Պաղանք Հայր, Սուրբ խաչ,
Ասրված ամենակարող,
Որ իմ ամեն մեղայս համար
Խաչափայտի վրա մեռար:
Ընձի հետ եղիր, Սուրբ Խաչ,
Ջիս մարմնավոր վտանգներեն ազատես,
Ո՛վ, Հիսուս Նազովրեցին,
Սուրբ Խաչդ զոր կպաշտեմ.
Հավիտյանս հավիտենից: Ամեն:

Եվ երկրորդ աղոթքը՝

Հայր հավիտենական,
Քեզ կմատուցանեմ Հիսուսի անգին արձանը,
Ի քավություն և ի թողություն
Մեղաց իմոց և պետս սուրբ եկեղեցի:

Կարևոր է, որ կտրված «նորը» մեկ տարի չկպչի ջրի: Այն կարում են կտորի մեջ, հետո կախում երեխայի վզից կամ դնում են բարձի տակ (Ղուկասյան, ԴԱՆ, 1980, 6 – 8):

Սիսիանում համարվում էր, որ երբ լուսինը հայտնվում է, երեխային չի կարելի տնից դուրս հանել, լուսինը ցույց տալ նրան, որպեսզի «լուսնովը չընկնի»՝ չհիվանդանա, հակառակ դեպքում «լուծ ա ընկնում, փոզմիշ ա լինում»: Անգամ երեխայի բարուրը չպետք է դուրսը թողնել: Իսկ որպեսզի երեխային աչքով չտան, դրամը կիսում են, կանթ են սարքում և ուլունքի հետ միասին կարում են հագուստի թիկունքին (Իսրայելյան, ԴԱՆ, Սիսիան, 1974, 11): Ինչպես նշում է Ե. Լալայանը, կրկին Սիսիանում. «Լուսնով ընկածի համար գնում են Բռնակոթ, Մելքոնց օջախը և տանելով մի արծաթ դրամ՝ խնդրում “լիսին” կտրել: Այս գերդաստանի անդամներից մեկնումեկը վերցնում է դրամը, մի կողքից կտրում է, մնացածի վրա կանթ շինում և վերադարձնում, որ “երեխայի վրայից կարեն”» (Լալայեան Գիրք Գ, 1898, 231 – 232):

Բենսեն նույնպես անդրադարձել է այս հավատալիքին: Նա գրում է. «Նորելուն ու փուլելուն երբ երեխաները հիվանդանում էին, վերագրվում էր լուսնին. առաջին պարագային հիվանդությունը կոչվում էր նորենցք, երկրորդին՝ փուլ. ուստի երեխաներին նորելու ժամանակ դուրս էին հանում, լուսինը ցույց տալիս և ասում. “Տե՛ս, քեռին”: Դրամի մի եզրից լուսնի նորի ձևով կտրում տալիս էին տերտերին, որ դնում էր սեղանի վրա պատարագի ժամանակ, տերտերն օրհնում էր և կախել տալիս նորենցքով հիվանդի վզից» (Մովսիսյան (Բենսե) 1972, 55): Այստեղից հետևում է, որ պատահականություն չէ «նորութ առած» (նորալուսնից հիվանդացած) երեխային բուժելիս դրամը հատկապես նրա քեռուց վերցնելը «նոր» կտրելու նպատակով, ինչպես որ ընդունված կարգն է: Կտրված այդպիսի դրամն ամրացնում են կրծքին, ուսին, գլխարկին, կախում էին վզից (Իսրայելյան ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, 5, 48): Եթե երեխայի շորերը գիշերը դուրսը մնային, ոչ միայն

լուսինը, այլ նաև «աստղը կխփեր» և նրան բուժելու համար մայրն իր ճակատազարդից մի դրամ կամ մի փուլ[10] էր հանում, կտրում էր 2–3 օրական լուսնի առջև կանգնած և ողջ ընթացքում մտքում աղոթում էր: Հետո այդ դրամը կարում էր երեխայի հագուստի ձախ կողմում կամ գլխարկին (Իսրայելյան, ԴԱՆ Ախալքալաք, Ախալցխա, 1978, 2):

Էջմիածնի Արշալույս գյուղում համարվում է, որ երբ երեխային «նորը տալիս է», լեզուն լուսնաձև դուրս է տալիս: Դրա համար դրամը լուսնաձև կտրում, կարում են երեխայի ուսին և դրա շնորհիվ նա ապաքինվում է: Դրամը կտրում է գրբացը: Այստեղ հիշում են, որ Մուղանում Նիկոլ անունով մի գրբաց Նիկոլայի ռուսական 20 կոպեկանոցն էր կտրում (Իսրայելյան, ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, 1973, 38): Ախուրյանի Հացիկ գյուղում ոսկե դրամը կամ ոսկու նման փուլն էին տանում եկեղեցի, տերտերին կտրել տալիս, կարում հագուստի ներսի կողմից, որպեսզի երեխան «նորանց չլիներ»՝ որպես նախազգուշական միջոց (Իսրայելյան ԴԱՆ, Լենինական, 1973, 1): Քեթիում նույնպես ոսկեգույն փուլը տալիս էին տերտերին, որն այն կտրում էր և պատարագի ժամանակ օրհնում: Այնուհետև այդ փուլը բերում էին տուն և կարում էին երեխայի հագուստի ուսին, որպեսզի պաշտպանվեր նորալուսնից (Իսրայելյան, ԴԱՆ, Քեթի, 1973, 3): Պտղնիում կտրած դրամը նաև կարում էին երեխայի թևքին (Իսրայելյան, ԴԱՆ, Պտղնի, 1976, 4):

Անկախ տարիքից էլ են լուսնաձև կտրած դրամով բուժում մարդկանց՝ հատկապես լուսնոտությունը, մոլոքորը, չբերությունը և այլն: Լուսնոտը «նոր» կտրած դրամն այնքան պետք է կրի, մինչև ապաքինվի: Երեխա չունեցող կանայք լուսնաձև կտրած դրամն այնքան ժամանակ էին կրում, առանց վրայից հանելու, մինչև երեխա էին ունենում:

Չար աչքից և չար ոգիներից է պաշտպանում լուսնաձև կտրած դրամը: Աշոցքում այդ չարիքներից երեխաներին պաշտպանելու համար խնդրում էին «հին գյումրեցի մի ջադուի», որ դեղին դրամը «նոր» կտրեր (Իսրայելյան, ԴԱՆ, Ղուկասյան, 1980, 4): Ենթադրվում է, որ «ջադուն» գրբացն էր: Մշեցիները (վերաբնակված Ձորագյուղում) երեխաներին աչքով չտալու համար «կոպեկից նորը», այսինքն կտրված դրամը կարում են գլխարկին, ուսին, կախում են վզից (Իսրայելյան, ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, 48):

Դրամը հաճախ օգտագործում են այլ հմայակների հետ մեկտեղ: Արցախում դրամից «լուսին են կտրում», կանթ սարքում և ուլունքների հետ միասին կարում երեխայի հագուստի թիկունքին բոլոր տեսակի չարիքներից պաշտպանելու համար (Իսրայելյան ԴԱՆ 1974, Արցախ, 11): Այսպիսի օրինակները բազմաթիվ են: Նույնը վերաբերում է խեցիներին, որոնց քիչ հետո կանդրադառնանք:

Դրամի և լուսնի ընդհանրություններից է **գուշակության** միջոց հանդիսանալը: Ինչպես վերը նշվեց, դրամով գուշակություն են կատարում, իսկ լուսինը ոչ միայն գուշակության միջոց է, այլ նույնիսկ գուշակելու շնորհ է տալիս. «Գուշակելու ձիրք կարող էր ձեռք բերել այն մարդը, որն ամբողջ գիշեր նստում էր սեպտեմբերյան լուսնի ներքո, և որը կոչվում էր «Հովալուսին» (ավագ լուսին): Հավատում էին, որ

10 Փուլ (պարսկերեն pul) – Մանր և չնչին արժէքով թիթեղեայ դրամ, փող: Տե՛ս Մալխասեանց, Հատոր 4 1945, 522:

կարմիր շորեր հագած նստեն վառվող մոմի վրա շրջված պղնձին (կաթսա) և հայելու մեջ ակնդետ նայեն լուսնին, ականատես կլինեն մղձավանջային տեսարանների, իսկ լույսը բացվելուն պես կիմաստնանան և կդառնան գուշակ» (Երնջակյան 1979, 54):

Լուսինը հավատալիքներում մերթ իգական սեռին է պատկանում, մերթ՝ արական: Ինչպես նշվեց, աղոթքներից մեկում նա քեռի էր, մյուսում՝ «կանաչ-կարմիր թագավոր»: Բայց նա նաև աղջիկ է՝ «լուսնյակն օխտն անգամ թե գեղեցիկ ու թե լուսով է արեգակից. բայց երկուսի մեջ եղած տարբերությունը նրանից է, որ քույրը չի ուզում եղբորը նսեմացնել աշխարհի առաջ. դրա համար է օխտը դաթ քողով ծածկել երեսը (Մխիթարեանց 1901, 198): «Ընծայ առ Լուսին» առակում նա արտակարգ բարի ու մեծահոգի աղջիկ է, Արև եղբայրը նրա օժիտի համար ոսկեթել շապիկ է հյուսել՝

...Լուսինն է ասել. «Արևուկ աղբար,
Այդ շապիկ նշխուն Լուսնիս չէ յարմար.
Տէրն է օրհնել զիս, հասակս է չափել,
Օրէ օր փոփոխ, փոքր ու մեծ լինել.
Տար դու այդ շապիկ սա մեր աշխարհին,
Աղքատիկ կուսին, անտէր, հարսնուկին»
(Տէր-Մինասեան 1893, 3–4):

Լուսնի բարությունն անմիջական կապ ունի ժողովրդի պատկերացումներում նրա դրական գործառույթների հետ: Ըստ Կողբացու ևս լուսինը իգական սեռին է պատկանում, այն «երկրի խոնավության պատճառ է և ինքն էլ խոնավ է» (Խոստիկեան 1916, 145–146): Հատկանշական է, որ կարևորվում է լուսնի խոնավություն և պտղաբերություն տալը մարդկանց, հողին ու կենդանիներին: Միևնույն գաղափարն է արտահայտվում նաև Աթհարվավեդայում, որտեղ արևն ու լուսինը Պուրուշայի աչքերն են. լուսնից անձրև է առաջանում և երկրի բուսականությունը ու արական սերմը լցվում է իգականի մեջ (Атхарваведа, упанишада II, 1, 5): Լուսնի և պտղաբերության հետ են կապվում նաև Աշվիններն ու Դիոսկուրները: Ինչպես նշում է ռուս ազգագրագետ Լև Շտերնբերգը, Աշվիններն ու Դիոսկուրներն ասոցիացվում էին պտղաբերության աստվածների հետ (կապվելով մերթ ջրային տարրի, մերթ՝ լուսնի հետ), նրանք ամուսնությունը հովանավորողներն էին, չբերությունը բուժողները և երեխաների ու կենդանիների բազմացումն ապահովողները (Штернберг 1916, 182):

Լուսնի պաշտամունքի ձևավորման ամենավաղ ժամանակներում, հավանաբար, նշանակություն է ունեցել այն, որ նա գիշերն է լուսավորում: Ըստ Գ. Ղափանցյանի՝ ուրարտերեն Sieardi լուսնի ասվածության անունը թարգմանվում է որպես «գիշերվա արև» (Մելիք-Փաշայան 1963, 69): Բոլոր դեպքերում ամբողջական և լուսնաձև կտրված դրամները, ոսկերչական տարբեր եղանակներով պատրաստված պահպանակներն ու զարդերը լուսնի պաշտամունքի առարկայական դրսևորումներն են, որոնք մշտապես պատկերվել, սարքվել ու կիրառվել են հնագույն ժամանակներից մինչև այժմ:

Դրամները զարդերում

Հայաստանում բոլոր ժամանակներում տարածված են եղել լուսին խորհրդանշող զարդերն ու նախշերը: Հատկանշական է, որ ոսկերչական տարբեր եղանակներով պատրաստված զարդերի «նոր» կոչվող և նորալուսին խորհրդանշող կախիկները հաճախ էին փոխարինվում դրամներով, ինչպես քունքազարդի մեկ «նորը» փոխարինված է ոսկե դրամով (նկ. 3, քունքազարդ, ՀՊԹ, № 5050/1,2): Հայկական զարդերում և հմայական պահպանակներում, հիմնականում, գործածվում են ռուսական, օսմանյան, պարսկական և եվրոպական դրամները: Ինչպես արդեն նշվեց, թե՛ ամբողջական դրամն էր լուսինը, թե՛ կտրվածը:

Հայկական ավանդական բազմապիսի հագուստները բոլորն էլ լրացվում և ամբողջացվում էին զարդերով: Միևնույն ժամանակ 18 – 20-րդ դարերում գրեթե չկար զարդի որևէ տեսակ, որ չունենար դրամներով իր զուգահեռը, ինչպես, օրինակ ճակատազարդերը, կրծքազարդերը, ապարանջանները, գոտիները և այն:

Նախկինում կանայք կրում էին մոտավորապես նույն ժամանակաշրջանում կամ ավելի վաղ թողարկված դրամներով զարդերը: Այժմ որքան հին է դրամը, այնքան ավելի արժեքավոր է այն համարվում:

18 – 20-րդ դարասկզբին որպես զարդ էին օգտագործում ոսկե, արծաթե, ավելի սակավ պղնձե և այլ մետաղներից ու համաձուլվածքներից հատված դրամները: Ինչպես վկայում է դրամագետ Արմինե Ջոհրաբյանը, եվրոպական դրամներից առավելապես նախընտրելի են եղել Ֆրանց Իոսիֆ կայսեր շրջանի ավստրո-հունգարական ոսկեդրամները՝ որպես խոշոր և միաժամանակ թեթև, կրելու համար հարմար դրամներ (14 գր): Սրանք օգտագործվում էին ինչպես առանձին՝ որպես զարդ, այնպես էլ դրամաշարերի կենտրոնում: Զարդ-կախիկների դեր էին կատարում նաև ռուսական, ֆրանսիական, գերմանական, նիդերլանդական ոսկե դրամները:

Երբեմն զարդերում դրամների փոխարեն ժետոններ և դրամների իմիտացիաներ էին օգտագործում: Սա ցույց է տալիս դրամի նկատմամբ վերաբերմունքը՝ նրան տրվող կարևորությունը:

Դրամներով զարդերը կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. զարդեր, որ բաղկացած են դրամներից, և 2. զարդեր, որտեղ դրամները բաղկացուցիչ մաս են: Այս տեսանկյունից բնորոշ օրինակներ են ՀՊԹ-ում պահվող երկու զույգ ականջօղերը՝ պատրաստված Կոստանդնուպոլսում 1808 – 1809 թթ. հատված ոսկե պիաստրներից: Առաջին զույգն (ՀՊԹ, № 7719-1 աբ) ունի մեկական ղուրուշ (պիաստր) և առանց այլ զարդամասերի է՝ միայն կեռով: Իսկ մյուսը միևնույն դրամներով է և ի հավելումն՝ ծաղկանման արծաթե զարդերով (ՀՊԹ, № 7719-2 ա,բ) (նկ. 4. ՀՊԹ, № 7719-1, ա և ՀՊԹ, № 7719-2, ա):

Առաջին խմբում կան քթի օղեր: «Քթի օղ» անվանումը պայմանական է: Արևմտյան Հայաստանում դրանք պատրաստվում էին թեթև ոսկեդրամներից և ամրացվում քթի աջ կողմում: ՀՊԹ ազգագրության պահոցի քթօղերից մեկը Աբդուլ Համիդի 1901 թվականին թողարկված ոսկե դրամ է (ՀՊԹ, № 7708), որի հակառակ երեսին պղնձե կեռիկ կա՝ քթին ամրացնելու համար: Դեմքի վրա միայն

դրամն է երևում: Քթի զարդերը նույնպես, բացի դրամներից, պատրաստվում էին դրամների նման նուրբ սկավառակներից: Կան նաև դրամներով ապարանջաններ (նկ. 5. ՀՊԹ, 8911, ք. Երևան, 1887թ.) և վզնոցներ (նկ. 6. ՀՊԹ, 6688, Վան, 1846 – 1865թթ., տասնհինգ, քսան և 25 կոպեկանոց ռուսական դրամներով):

Դրամներով զարդերից են կանանց ճակատի ոսկե և արծաթե դրամաշարերը՝ տարածված պատմական Հայաստանի տարբեր շրջաններում՝ Արցախում, Սյունիքում, Բարձր Հայքում, ինչպես նաև հայաբնակ վայրերում՝ Վրաստանում, Իրանում և այլուր: Սրանք կարվում էին պարզ կամ ասեղնագործված նախշերով կտորի շերտին: Ընտրվում էին միատեսակ, միաչափ դրամներ, երբեմն կենտրոնը շեշտվում էր մի խոշոր դրամով, որը կոչվում էր «միջնոց»: Հարուստ կանանց դրամաշարերը ոսկուց էին, աղքատներինը՝ արծաթից (Мелик-Шахназаров 1898, 19): Ոսկե դրամաշարերերի մասին ուշագրավ դիտարկում է արել Ա. Ալպոյաճյանը: Նա գրում է, որ հարուստների կանայք զարդերի գրեթե բոլոր տեսակներն ունենում էին անպատճառ: Իսկ եթե արհեստավորների կանայք զարդերի մեծ մասը չունենային, պարտադիր կարգով ունենում էին «ոսկի շարոցը» (Արշակ Ալպոյաճեան 1952, 1475): Ամենուրեք դրամներով վզնոցներն ու կրծքազարդերը մեկ կամ մի քանի շարքով էին կախվում վզից կամ ամրացվում էին ուսերի մոտ: Ընդունված էր նաև սրանց հետ միասին այլ զարդեր կրելը, ինչպես օրինակ ուլունքաշարեր, վիշապներով կամ այլ վզնոցներ (ինչպես վկայում են հին լուսանկարները):

Դրամներով զարդերի երկրորդ տեսակն ավելի բազմազան է ու հարուստ: Այստեղ մետաղադրամները համադրված են ոսկերչական տարբեր եղանակներով կատարված ոսկե, արծաթե, մելքիորե զարդերի, շղթաների, բնական ու արհեստական քարերի հետ (նկ. 7. ՀՊԹ, № 6695):

Այս զարդերում տարբեր տարրերի քանակային հարաբերությունները, չափսերը, համաչափությունները, ինչպես և դասավորությունները բազմազան են: Այսպես՝ վզի ու կրծքի դրամաշարերը հաճախ մեկընդմեջ շարված ուլունքներ կամ այլ զարդամասեր ունեն: Ըստ որում դրամներով կրծքազարդերը ոչ միայն հորիզոնական ուղղությամբ էին կախվում, այլև՝ ուղղահայաց, ինչպես ներսի կողմից վերնամասում ճարմանդով կրծքազարդը (նկ. 8. ՀՊԹ, № 6467):

Դրամներ ունեին կանանց քունքազարդերը: Սա հատկապես բնորոշ է Կարինի և առհասարակ՝ Բարձր Հայքի շրջաններին: Այստեղ քունքերից ցած իջնող երկար մարգարտաշար կամ նմանատիպ ուլունքներով շարերի ծայրերին ոսկե կամ այլ մետաղներից հատված դրամներ են կախվում: Վասպուրականում և նրա հարակից շրջաններում արծաթե քունքազարդերը դրվագումով, զուգաթելով, վերադիր նախշերով ու ակերով էին զարդարվում և ունեին դեպի ետ աստիճանաբար երկարող վեց կամ յոթ շղթաներ, որոնց ծայրերին արծաթե դրամներ էին կախվում (ավելի հաճախ՝ այլ զարդեր):

Կրկին Արևմտյան Հայաստանի ավանդական զարդերից են սկավառակաձև կամ թեթև գոգավորությամբ արծաթե գլխազարդերը, որոնց շուրջբոլորը հավասար շղթաներ են կախված՝ ծայրերին դրամներ կամ կիսալուսին խորհրդանշող՝ ներքևի մասերում կլոր անցքերով կամ այլ կախիկներ:

Գլխազարդերից դրամներ ունեն հատկապես Սյունիքի զարդերին բնորոշ

զույգ «կեռերը», որոնք բաղկացած են շղթաներից և սևադազարդ կամ զուգաթելով ու հատիկազարդ նրբագեղ հատվածներից: Սրանք գլխի ետևի մասում խաչվելով, ամրանում են քունքերի մոտ (նկ. 9. ՀՊԹ, № 7775/51/ա):

Բավականին տարածված էին մեկընդմեջ շարված ուլունքներով ու դրամներով վզնոցները:

Դրամներով էին զարդարվում նաև գոտիները: Արցախի և Զանգեզուրի կանանց սևադով նախշազարդված ճարմանդներով գոտիների կաշվի վրա երբեմն աստղաձև, խաչաձև և այլ զարդերի փոխարեն դրամներ էին ամրացնում: Դրամներից յուրաքանչյուրի կենտրոնում օղակ էին ձուլում, անցկացնում էին կաշվի հակառակ երեսին և այդ օղակների միջով թել կամ բարակ կաշի էին անցկացնում դրանք ամուր պահելու համար: Տղամարդկանց գոտիներն այս շրջաններում մի քանի շար դրամներով էին զարդարվում և երբեմն էլ դրամները կախվում էին գոտու ճարմանդի տակից: Այստեղ մեծամասամբ ռուսական դրամներն էին տարածված:

Հատկապես Սյունիքի կանանց հագուստի ներքևի մասի ճեղքերին կարվող զարդերի տարբերակներից են արծաթե այն շղթաները, որոնք մեկընդմեջ բոժոժիկներ և դրամներ ունեն: (ՀՊԹ, № 5024)

Դրամները հաճախ են հանդես գալիս որպես կանանց և երեխաների հմայական պահպանակներ և պահպանակների բաղադրիչ մասեր, որոնք և՛ զարդի են նման, և՛ մոգական զորությունով են օժտված ժողովրդական հավատալիքների համաձայն (ինչպես, օրինակ ՀՊԹ-ում պահվող № 4718 գոգնոց-հմայիլը: Նկ. 10)

Կաուրի խեցին

Արտակարգ ուշագրավ է այն դրամը, որը մետաղից չէ և Հայաստանում կարևոր նշանակություն է ունեցել հատկապես որպես հմայական բազմագործառույթ պահպանակ: Դա կաուրի խեցին է: Այն 3500 տարի առաջ Չինաստանում է սկսել հանդես գալ որպես դրամական միավոր: Այնտեղից անցել է ասիական տարբեր երկրներ, օգտագործվել մինչև 19-րդ դարի կեսերը: Ստրկավաճառության սկզբի հետ միաժամանակ՝ 16-րդ դարից կաուրին տարածվել է Աֆրիկայում: Մի քանի դար շարունակ կաուրիները մետաղադրամների հետ միաժամանակ էին օգտագործվում (1900 թ. 1 ֆրանկն արժեր 60 – 400 կաուրի, մեկ ռուպին՝ 200, արևմտաաֆրիկյան շիլլինգը՝ 1200 խեցի): Ըստ որում կաուրի խեցիներն էլ էին արժեզրկման ենթարկվում. Օրինակ՝ Ուգանդայի հեռավոր շրջաններում 18-րդ դարում կինն արժեր ընդամենը 2 կաուրի, իսկ դեպի օվկիանոս տանող ճանապարհների շինարարությունից և խեցիների քանակի ավելացումից հետո՝ 100 տարի անց, կնոջ գինը դարձավ 1000 խեցի (Пиотровский 1955. https://numizmat.ru/news/rakushki-dengi/):

Հայտնի է, որ կաուրի խեցիները Հնդկական, Խաղաղ օվկիանոսներից, Միջերկրական և այլ ծովերից էին ձեռք բերվում և Հայաստան էին գալիս առևտրի ճանապարհով շատ հին ժամանակներից ի վեր: Այս մասին են վկայում տարբեր շրջաններում կատարված հնագիտական պեղումների արդյունքները: Հնագետ Կ. Կուշնարյովան Դվինում Բրոնզի դարի վերջի-Երկաթի դարի սկզբի ժամանակաշրջանի ոսկերչական արհեստանոց է պեղել, որտեղ ագաթե, սարդիոնե, մետաղե

և մածուկե (պաստա) ուլունքների հետ մեկտեղ կաուրիներ էին մշակվում: Նա նշում է, որ նախկինում մարդկանց պատկերացումներում կաուրիներն օժտված էին բուժող և հիվանդությունները կանխարգելող հատկություններով: Առաջավոր Ասիայում, որտեղ խեցիներին մոգական նշանակություն էին տալիս, նրանք հանդիպում են աստվածությունների քանդակների վրա, տաճարների հիմքերում և որպես պատերի զարդեր (Кушнарева 1977, 93): Ինչպես մետաղադրամն էր դրվում կառույցի հիմքում ու պատի մեջ, այնպես էլ կաուրիներ էին կիրառվում: Խեցիներ են հայտնաբերվել նաև Կարմիր բլուրի պեղումների ժամանակ: Նույնիսկ 62 կաուրի խեցիներից բաղկացած մանյակի բրդյա թելերի մնացորդներ են պահպանվել թաղումներից մեկում (Пиотровский 1955, 46, 54): Հ. Մարտիրոսյանը գրում է, որ Խրտանոցի մ.թ.ա. 7–6-րդ դարերի թաղումներում հանգուցյալների վիզն ու մազերը զարդարող մեծ քանակությամբ կաուրիներ են գտել (Мартиросян 1954, 25): Այս փաստերը ցույց են տալիս, որ կաուրիները մարդկանց ուղեկցում էին ոչ միայն այս, այլև այն աշխարհում: Բացի այդ, Խրտանոցի կաուրիներով զարդերը վկայում են, որ 19–20-րդ դարերում կաուրիներով մազերը զարդարելը շատ հին ժամանակներից է գալիս: Այս տեսանկյունից ուշագրավ է ՀՊԹ-ի ազգագրության պահոցում գտնվող ծամի զարդը՝ կաուրի խեցիներով, դրամներով և կապույտ աչքի ուլունքներով, որ կրում էին աղջիկներն ու նորահարսները (նկ. 11. ՀՊԹ, № 6631).

Կաուրիները, որ կոչվում են նաև օրոճ կամ օրոճիկ, որպես չար աչքից պաշտպանող հմայիլ, կարում էին հագուստի ուսին (Հարությունյան, ԴԱՆ, 1986, 2): Երեխաներին չար աչքից և չար ոգիներից և հիվանդություններից պաշտպանելու համար Մշեցիները Ձորագյուղում դրամից կտրած «նոր»-ը, խեցին, կապույտ և նախշուն ուլունքները կարում են կապույտ, խաչաձև կտորին և ամրացնում (կարում) են երեխայի հագուստի ուսին: Բացի այդ, դրանք ամրացվում են կարմիր կամ կապույտ կտորից կարված խաչի վրա և կարվում երեխայի հագուստի թիկունքին, ուսին կամ գլխարկին: Այս նպատակով յուրաքանչյուր խեցու անցքը բացելիս աղոթք է ասվում. «Օրոճիկ ջան, օրոճիկ, /Իմ ցավ ու չոռ տա՛ր, լի՛ց ծով» (Իսրայելյան, ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, 50): Ինչպես դրամներով կանացի հմայական պահպանակներն էին գոտուց կախվում (նկ. 9), այնպես էլ խեցիներով գոգնոցանման հմայակները (նկ. 12):

Եզրակացություն

Այսպիսով, դրամը բազմագործառույթ է: Այն տարբեր խորհրդանշական իմաստներ ունի և հանդես է գալիս նույնիսկ որպես գուշակության միջոց: Նրա դրական, բարեբեր հատկանիշներն ընդգծվում են տարբեր ծեսերում:

Դրամները որպես զարդեր կամ զարդերի մասեր՝ բոլոր դեպքերում պահպանում են նրանց վերագրվող մոգական հատկանիշները, իսկ երբ հատուկ պատրաստված հմայական պահպանակների հետ են հանդես գալիս, նրանց զորությունը բազմապատկվում է: Մետաղադրամը, ինչպես և խեցին նաև ինքնուրույն, առանձին օգտագործվող հմայական պահպանակներ են հնագույն ժամանակներից ի վեր: Եվ եթե հանգամանորեն զննենք ու ի մի բերենք խեցե և մետաղե դրամների գերբնական հատկանիշներն ըստ ժողովրդական պատկերացումների, կարող ենք

եզրակացնել, որ նրանց բարի գործառույթները բազմատեսակ են ու բազմաքանակ: Նրանք պաշտպանում են չար ուժերի սարսափելի ու վտանգավոր ազդեցությունից, զավակներ, առատություն, բերքատվություն, ամրություն, աճ, բախտավորություն, երջանկություն են ապահովում և այլն: Իսկ բացի հավատալիքներից, դրանք ցույց են տալիս մարդկանց հասարակական դիրքը, կարգավիճակն ու գեղագիտական արժեքների անհրաժեշտության պահանջը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դաշտային ազգագրական նյութեր

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Սիսիան, 1972:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, 1973:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Լենինական, 1973:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Քեթի, 1973:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Սիսիան, 1974:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, 1978:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Ղուկասյան, 1980:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Ղափան, 1985:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Հառիճ, 1986:

Իսրայելյան Ա., ԴԱՆ, Կարբի, 1987:

Խանջյան Վ., ՀՊԹ ազգագրության բաժնի արխիվ, № 100 – 104:

Հարությունյան Վ., ԴԱՆ, Մարտունի, 1986:

Գրականություն

ԱԼՊՕՅԱՃԵԱՆ 1952 – Ալպօյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952:

ԱՃԱՌԵԱՆ 1902 – Հ. և Ա. Աճառեան, Հաւաքածոյ Պոլսահայ ռամկական անգիր գրականութեան, Ազգագրական հանդէս, Գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 160 – 196:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, Հ 2 1972 – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հատոր 2, Երևան, 1972:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, Հ 4 1980 – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հատոր 4, Երևան, 1980

Ա. Յ. Շ. 1900 – Ա. Յ. Շ., Նախապաշարումներ ու սովորութիւններ Ակնայ մէջ, Բիւրակն, թիւ 41, 7 նոյեմբերի, Կ. Պոլիս, 1900, էջ 647 – 649:

ԵՐՆՋԱԿՅԱՆ 1979 – Երնջակյան Ն., Լուսինը հայ ժողովրդական հավատալիքներում և սովորույթներում (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, № 2, էջ 53 – 60:

ՋՈՀՐԱԲՅԱՆ 2018 – Ջոհրաբյան Ա., Փողի տեսակները և դրանց ծիսական նշանակությունը, «Հայ ժողովրդական մշակույթ XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Երևան, 2018, էջ 156 – 167:

ԹԵՄՈՒՐՃՅԱՆ 1970 – Թեմուրճյան Վ. Ս., Գամիրքի հայերը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն 1», Երևան, 1970:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2018 – Իսրայելյան Ա., Մետաղե զենքերը, գործիքներն ու սարքերը հմայությունում, Պատմա-բանասիրական հանդես, 2018, № 3, էջ 234 – 253:

ԼԱԼԱՅԵԱՆ 1897 – Լալայեան Ե., Վարանդա, Ազգագրական հանդէս, Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 5 – 224 :

ԼԱԼԱՅԵԱՆ 1897 – Լալայեան Ե., Ջաւախք, Ազգագրական հանդէս, Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 245 – 306:

ԼԱԼԱՅԵԱՆ 1898 – Լալայեան Ե., Սիսիան, Ազգագրական հանդէս, Գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 221, էջ 105 – 272:

ԼԱԼԱՅԵԱՆ 1898 – Լալայեան Ե., Զանգեզուր, Ազգագրական հանդէս, Գիրք Դ, Թիֆլիս, 1898, էջ 7 – 116:

ԼԱԼԱՅԵԱՆ 1907 – Լալայեան Ե., Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, Ազգագրական հանդէս, Գիրք XVI, Թիֆլիս, 1907, էջ 9 – 65:

ԼԱԼԱՅԱՆ 1931 – Լալայան Յե., Դամբաններիի պեղումներ Խորհրդային Հայաստանում, Յերևան, 1931:

ԼԻՍԻՑՅԱՆ 1981 – Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Երևան, 1981, № 12:

ԽՈՍՏԻԿԵԱՆ 1916 – Խոստիկեան Մ., Ազգագրական նիւթեր Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի մէջ, Ազգագրական հանդէս, Գիրք XXVI, Թիֆլիս, 1916, էջ 145 – 146:

ԽՈՐԵՆԱՑԻ 1990 – Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Ստ. Մալխասյանի, Գիրք երկրորդ, Երևան, 1990:

ՀԱՅԿ 1959 – Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, Յուշամատեան ազգային – պատմական-մշակութային և ազգագրական, Աշխատասիրեց և կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ, Հ. 4 2007 – Հայոց լեզվի բարբառային բառարան, Հատոր 4, 2007:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ, ՀԱՏՈՐ III, № 10 1962, Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր III, № 10, Երևան, 1962:

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ 1963 – Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ 1901 – Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից, «Էմինեան ազգագրական ժողովածու, Ա. Հաւատք, Նախապաշարմունքներ», Մոսկուա-Ալէքսանդրապոլ, 1901, էջ 188 – 208:

ՇՆՈՐՀՔԵԱՆ 1899 – Շնորհքեան Հայդուխտ, Պոլսոյ ընտանեկան կեանքէն, Բիւրակն, թիւ 1 – 02, 7 յունուար, Կ. Պոլիս, 1899:

ՄԱԼԽԱՍԵԱՆՑ 1945 – Մալխասեանց Ստ. , Հայերէն բացատրական բառարան, Հատոր 4, Երևան, 1945,

ՄՈՎՍԻՍՅԱՆ 1972 – Մովսիսյան Ս. (Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, № 3, Երևան:

ՇԱՀԱԶԻԶ 1902 – Շահազիզ Ե., Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, Ազգագրական հանդէս, Գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 5 – 82:

ՊԷՐՊԷՐԵԱՆ 1959 – Պէրպէրեան Ծ., Գոմք գիւղը, Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, Յուշամատեան ազգային – պատմական-մշակութային և ազգագրական, Աշխատասիրեց և կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959, էջ 914 – 925:

ՍԻՐՎԱՐԴ 1959 – Սիրվարդ Ե., Մօրենիկ գիւղը, Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, Յուշամատեան ազգային – պատմական-մշակութային և ազգագրական Աշխատասիրեց և կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959, էջ 901 – 906:

ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ 1893 – Վահան վարդապետ Տէր-Մինասեան, Անգիր դպրութիւն և առակք, Կ. Պոլիս, 1893:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ 1901 – Քաջբերունի, Հայկական սովորութիւններ, Ազգագրական հանդէս, Գիրք VII – VIII, Թիֆլիս, 1901, էջ 113 – 204:

АТХАРВАВЕДА, УПАНИШАДА, II, 1, 5 – Атхарваведа, Упанишада, II, 1, 5.

КУШНАРЕВА 1977 – Кушнарева К. Х., Древнейшие памятники Двина, Ереван, 1977.

МАРТИРОСЯН 1954 – Мартиросян А. А., Раскопки в Головино, Ереван, 1954.

МЕЛИК-ШАХНАЗАРОВ 1898 – Мелик-Шахназаров Е., Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, Отдел II, Вып. XXV, Тифлис, 1898, сс. 1 – 58:

ПИОТРОВСКИЙ 1955 – Пиотровский Б. Б., Кармир-блур III, Ереван, 1955.

ШТЕРНБЕРГ 1916 – Штернберг Л. Я., Античный культ близнецов при свете этнографии. Сборник Музея антропологии и этнографии им. Петра Великого, Том III, Петроград, 1916, сс. 133 – 189:

ИВАНОВ 1980 – Иванов В. В., Вино, Мифы народов мира, Москва, 1980.

ТРЕСИДДЕР 1999 – Джек Тресиддер, Словарь символов, Москва, 1999.

Էլեկտրոնային աղբյուրներ

https://www.facebook.com/MashtotsMatenadaran/posts/436676577084420/

https://numizmat.ru/news/rakushki-dengi/. 13: 2: 2023.

Astghik Israelian
PhD

History Museum of Armenia
Astghikisraelian@gmail.com

MAGICAL AND AESTHETIC VALUES OF COINS

Keywords: coins, cowrie shells, ritual, apotropaic magic, fortune telling, moon, decorations.

In folk traditions and beliefs, money has various properties in addition to its main function-the amount of value. In Armenian folk beliefs, coins protect against evil forces –they are apotropaic charms; besides, they bring abundance, happiness, health, growth, etc. Thus, they play an important role in popular feasts and rituals. The supernatural features of coins are related to the power attributed to metals. Coins save from terrible dreams, help to overcome fear, heal the diseases, protect from the evil eye, ect.

According to the foundation ritual when building a house, money is placed in the basement-in the corner, under the threshold, in walls so that the building be strong: the devils are afraid of the coins so they do not approach and destroy the house. Besides, the coins bring abundance, wealth, fortune, and many children. The practice of consecrating foundation offerings originated as early as the art of building.

On the occasion of engagement ceremonies and wedding rituals both jewellery and money were presented to the newlyweds. In agricultural rites, the coins help to ensure the fertility of the soil: when plowing the land, money is thrown into the first furrow and when planting a tree, money is put into the pit for auspicious growth and abundant harvest.

Money is a means of divination. The most powerful coin is the one got out of the New Year's bread called “tari hats” (literally: year bread). The person who finds it is “the owner of the year and the luckiest one”. He keeps it in his purse so that it be full of money all year round or takes it to the church, buys a candle and lights it, praying before the saints.

Money is a charm by itself or a component part of various charms. The magical power of money comes from the moon (besides the metals). As the symbol of the adorable moon,

the coin bears its miraculous features. Especially the growing new moon brings happiness, health, and fullness. In order "to turn the coin into a *new moon*", the coin was cut (circular on the bottom) by special people: 1. the priest during the liturgy, 2. the witch, praying on the new moon, 3. the blacksmith, 4. the member of the family that has received this gift *from above*. Jewellery and patterns symbolizing the moon have always been of special value and popular in Armenia. It is noteworthy that pendants of different decorations symbolizing the new moon (called "new") made in various jewellery techniques were often replaced by coins in 18th – 20th centuries. Most of the ornaments have their counterparts in coins, such as forehead ornaments, bracelets, breast ornaments, belts and the like. But more common were the countless types of jewellery and amulets mixed with coins (Russian, Ottoman, Persian and European) and various types of jewellery.

The money, which is not made of metal, and was of great importance in Armenia was the cowrie shell. Besides their monetary value, they were used as magical multi-functional amulets and adornments. These shells were obtained from the Indian, Pacific Oceans, Mediterranean and other seas and were brought to Armenia since ancient times as evidenced by archaeological excavations in different regions of Armenia.

Астхик Исраелян
Кандидат исторических наук

Музей Истории Армении
Astghikisraelian@gmail.com

МАГИЧЕСКОЕ И ЭСТЕТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ МОНЕТ

Ключевые слова: монеты, ракушки каури, апотропеическая магия, ритуал, гадание, луна, украшения.

Помимо своей основной функции – суммы стоимости, деньги имеют иные различные свойства: в армянских народных верованиях монеты защищают людей от злых сил – являются апотропеическими амулетами, сверх того, они приносят счастье, изобилие, размножение, рост и пр. Не случайно им придавалось важное значение во время празднеств и ритуалов. Сверхъестественная сила монет в первую очередь связана с силой, приписываемой металлам.

Деньги спасают от дурных снов, помогают побороть страх, оберегают от сглаза.

Деньги играют значительную роль в строительном ритуале. При постройке дома деньги кладут в фундамент, в угол, под порог, чтобы здание было крепким, черти боялись и не подходили, не разрушали дом, к тому же дом будет обильным, богатым и родится там много детей. Иногда вместе с пшеницей и хлебом монету клали в фундамент дома. Это отголосок древнего строительного ритуала жертвоприношения.

Во время помолвки и церемоний свадебного обряда вместе с различными драгоценностями (в частности с украшениями) молодоженам дарили монеты.

В земледельческих обрядах монеты используются с целью обеспечения плодородия почвы: при вспашке земли деньги бросают в первую борозду. При посадке дерева в лунку бросают деньги на благоприятный рост и обильный урожай.

Монета-средство гадания, а также благоприятный оберег. Самым значительным является та монета, которую кладут в новогодний ритуальный хлеб для гадания. Тот, кто приобретает эту монету, считается "обладателем года и самым удачливым". Он эту монету держит в кошельке, чтобы он был полон денег круглый год, или берет ее в церковь, покупает свечу и ставит перед святыми в молитве.

Монеты были оберегами сами по себе или являлись составной частью различных амулетов. Магическая сила денег исходит от Луны (кроме металла). Как символ почитаемой луны, монета носит в себе ее чудодейственные свойства. Особенно

молодая, растущая луна приносит счастье, здоровье, изобилие. Чтобы монету превратить в луну, ее снизу резали (кружочком) особые лица – 1. священник во время службы, 2. колдун, с молитвами в новолуние, 3. кузнец, 4. член той семьи, которая получила этот дар сверху .

Украшения и узоры, символизирующие луну всегда были распространены в Армении. Не случайно ювелирные изделия, имеющие форму луны, вернее новолуния, заменялись монетами.

В 18 – 20-го вв. не было ни одного вида украшения, который не имел бы свой аналог с украшениями, состоящими из монет, как например налобные украшения, браслеты, ожерелья, пояса и пр. Но более распространёнными были украшения и амулеты, имеющие монеты и части украшений одновременно. Обычно использовались русские, османские, персидские и европейские монеты.

Особенно интересны те монеты, которые не были чеканены из металлов, и в 19 – 20-го вв. были распространены в Армении как многофункциональные обереги – это ракушки каури (лат. cypraeidae). Каури обитают в тропических морях, в Средиземном море, Индийском, Тихом океанах и пр. Их привозили в Армению с древнейших времен. Об этом свидетельствуют археологические раскопки в разных районах Армении.

В народных верованиях эти ракушки имели свойства оберегов – защищали от злых сил, приносили удачу, счастье и пр. Именно поэтому они являлись значительными частями украшений и амулетов.

Ասպոիկ Իսրայելյան

ԴՐԱՄՆԵՐԻ ՄՈԳԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Նկ. 1. Նշանադրության նվեր՝ սկուտեղով մատուցվող խնձորի մեջ խրված մատանի և մեսրաղադրամներ:

Նկ. 2. Գորգ օժիտի, 19-րդ դար: ՀՊԹ, 10743

Նկ. 3. Քոնքազարդ շղթայով, ոսկե ժետոնով: 19-րդ դար, Թիմար գավառակ: ՀՊԹ, 5050 - 1, 2

Նկ. 4ա. Ականջօղեր՝ ոսկե պիասպրներով 1808 - 1809 թթ., Պոլիս: ՀՊԹ, 7719-1

Նկ. 4բ. Ականջօղեր՝ ոսկե պիասպրներով: 1808 - 1809 թթ., Պոլիս: ՀՊԹ, 7719-2

նկ. 5. Ապարանջան՝ 1887 թվականի ռուսական հինգ կոպեկանոց մետաղադրամներով: 1887 թ., Երևան: ՀՊԹ, 8911:

նկ. 6. Վզնոց՝ ռուսական մետաղադրամներով: 19-րդ դար, Մոկսի գավառակ, Վանի գավառ, Վանի նահանգ: ՀՊԹ, 6688

նկ. 7. Վզնոց՝ ռուսական, օսմանյան, լեհական, պրուսական, ավստրո-հունգարական մետաղադրամներով: 19-րդ դար, գյուղ Գինեկանց, Մոկսի գավառակ, Վանի գավառ, Վանի նահանգ: ՀՊԹ, 6695

նկ. 8. Կրծքազարդ՝ ճարմանդով և ոռսական դրամներով: 19-րդ դարի սկիզբ: Շամշադինի գավառակ (Տավուշ), Ղազախի գավառ, Ելիզավետպոլի նահանգ, ՀՊԹ, 6467



նկ. 9. Կեռեր գլխի հարդարանքի՝ ոռսական 1860, 1861, 1862, 1863, 1864, 1865, 1866 թթ. քսան կոպեկանոցներով: 19-րդ դար: Մեղրի, Զանգեզուրի գավառ: ՀՊԹ, 7775 -51 ա

Նկ. 10. Հմայիլ - գոգնոց, դրամներով (գոտկատեղից ցած կախվող)՝ օսմանյան մետաղադրամներով: 19-րդ դարի սկիզբ: ՀՊԹ, 4718

Նկ. 11. Ծամի զարդ՝ 1806 - 1807թթ. մետաղադրամներով: 19-րդ դարի սկիզբ: Վան: ՀՊԹ, 6631:

12. Հմայիլ-գոգնոց կանացի, խեցիներով (գոտկատեղից ցած կախվող): 19-րդ դարի սկիզբ: ՀՊԹ, 1512

ԱՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ